

բել քաղաքի մուգէումը։ Այդ արձանը ժողովուրդը կանգնեցրած չէ ստորագրութիւններ բանալով և փող հաւաքելով, այլ 1851 թւին քաղաքապետական ժողովը կանգնեցրել է քաղաքային կառավարութեան ծախսքով։ Հետեւապէս արձանը պատկանում է քաղաքի լնդհանրութեան և ենթարկվում է քաղաքային իշխանութեան իրաւասութեանը։ Այդ արձանի համար 20,000 ֆրանկ ծախսէ եղել և նրա մարմարէ պատուանդանի համար 6,000 ֆր.

Վէրդիւնի քաղաքապետական ժողովը յուլիսի 1-ին ուղարկել է տիկին Թիէրին հետևեալ նամակը: «Տիկին, Փարիզ և ամբողջ Ֆրանսիան երէկ կատարեցին հանրապետութեան առաջին տօնախմբութիւնը: Վէրդիւնի քաղաքապետական ժողովը պարտք համարելով այդ ազգային տօնի հետ միացնել այն մեծ քաղաքացու անունը որ Ֆրանսիայի հոգի ազատաբար և հանրապետութեան հիմնադիր եղաւ, միաձայն որոշեց իր այսօրվայ նատում՝ որ այս քաղաքի հրապարակներից մինը պ. Թիէրի անունով կոչվի: Այս որոշումը յայտնելով, տիկին, ապահովացնում ենք ձեզ թէ ինչ երախտագիտութեամբ յիշում ենք այն անուանի քաղաքացին որը կորցրած է այժմ Ֆրանսիանց:

Գամբէտտայի առողջութեան մասին վըր-
դովեցնող լուրեր տարածվել էին: «National»
լրագիրը դրա մասին գրում է հետևեալ:
«Կիրակի օր, երբ պ. Գամբէտտա ուզում էր
դուրս գալ իր հիւրանոցից, դրան առջև
հաւաքված բազմութիւնը ուզեցել է նրա
կառքի ձիերը արձակել և ինքն քաշել յաղ-
թանակով: Գամբէտտայի բարեկամներին շատ
դժուարութեամբ աջողվել է արգելել ժողո-
վըդին այդ օվացիան: Պ. Գամբէտտան ը-
կամենալով որ պատճառ գտնեն մի նոր ցոյց
անելու, երեկոյեան շատ ուշ է վերադարձել
իր տուն, վեց ժամ կառքով մանգալուց յե-
տոյ: Այդ պատճառով մի քիչ խոնջել է և
հարբուս է ունեցել այնպէս որ երէկ ամբ-
բողջ օրը չէ կարողացել սենեակից դուրս
գալ: Այսօր կատարելապէս առողջացած է»:

Վիրտօր Հիւգօ մի քիչ խոնջած լինելով
աշխատութիւններից, գնացել է հանգստա-
նալ Գեղնըսէյի ծովեզրում: Աւելի իր փառ-
քի և պատուի քան թէ իր հանգստու-
թեան բարեկամները՝ խնդրել էին որ Պու-
սոյի դարեդարձի հանդիսին էլ նախագահի,
բայց իր ընտանիքը մտածել է որ երբ ան-
ցած դարի մեծ մարդկանց վրա այդշափ
հոգս են անում, ի հարկէ ներելի է հոգա-
անել այն մեծ մարդի վրա էլ որ մեր մէջ
գտնվում է այժմ և նրան գոնէ մի ամսի
չափ հանգիստ թողնել:

Բիւդժէտային մասնաժողովը որոշել է ամ
սական 100,000 ֆրանկ, ուրեմն 1,200,000
ֆրանկ տարեկան ծախք համբապետու-
թեան նագագահի համար հետեւեալ կերպով՝
600,000 ֆր. նախագահին տարեկան վարձ,
300,000 ֆր. տան ծախք և 300,000 ֆր.
ճանապարհորդութեան և ընդունելութեան
ծախքեր։ Պարլամենտի համար որոշվել է
տարեկան ծախք 10,821,000 ֆրանկ որի
4,300,000 ֆրանկը սենատի համար և
6,521,000 ֆր. պատգամառների ժողովե
համար։

Գրականական կօնդրէսը իր վերջին նըստում հաստատել է գրագէտների միջազգային ընկերութեան մասնաժողովը։ Պատուաւոր մասնաժողովի նախագահ որոշվել է Վիկտօր Հիւգօ և անդամներ պ. պ. Եղմօն Աբու, Տուրքէնէվ, Կաստէլար, Թիւլ Սիմօն և այլն։ Գործադիր (executif) մասնաժողովը բաղկանում է 45 անդամներից, որոնցից 15 Փրանսիացի են և 30 օտարազգին:

Արուեստահանդիսի այցելուներից գոյացած
եկամուտը մայիս և յունիս ամիսներում՝ չը
հաշուելով միասին կիրակի օրվայ եկամուտը,

Հասել է 3,122,903 ֆրանկի։ Մինիստրների
խորհուրդը, առաջարկութեամբ առեւտրա-
կան մինիստրի, որոշել է վիճակահանութիւն
(լոտարէա) հաստատել արուեստահանդիսում
գտնված վաճառքների համար, արուեստա-
հանդիսի վերջանալուց յետոյն Խրաքանչեւր
տումնակ կարժենայ 50 սանտիմ։ Լուսաւո-
րութեան մինիստր պ. Բարլու որոշել է որ
1000-ի չափ մանկավարժներ արուեստահան-
դիսում հաւաքվեն և խորհրդակցութիւններ
անեն։ Աւելի քան թէ 300 խմբագիրներ,

աշխարհի զանազան կողմերից եկած, հաւաք-
վել են արուեստահանդիսում, և լրագրու-
թեան պաշտօնի և քաղաքակրթութեան
վրա նրա ունեցած ազգեցութեան վերաբե-
րեալ ճառեր խօսելով, հանդէս են կատա-
րել:

ՑՈՒՆԱԾՈՅՆ

Աթէնքի ժողովուրդը շատ գրգռված է որ
կօնզրէսը անտես արաւ Յունաստանի ցան-
կութիւնները և յունական նահանգները
թողեց թիւրքաց անտանելի լուծի տակ։ Յու-
նաստանի պատգամաւորները, պ. պ. Դէլիա-
նիս և Թագարէ, յունիսի 29-ին, կօնզրէսին
նեռիաւառաջ իշխանակառի մէջ պահան-

ջում էին սահմանակից յունաբնակ նահանգների և Կրիտ կղզու միանալը Յունաստանի հետ։ Պ. պ. Վաղինգտոն և Կորտի, Ֆրանսիայի և Խոտալիայի առաջին հաւատարմատարները աշխատել են կօնդրէսում փոքր իշխառք բաւականութիւն տալ Յունաստանի պահանջներին։ Բայց լորդ ԲիկոնսՓիլդ միերկար ճառ խօսելով, հակառակվել է և ասել է թէ կօնդրէսը իրաւունք չունի Թիկրքիայի հողերը նրանից խլելու և իր կամեցած կերպով կարգադրելու։ Կոմս Անդրաշը մասնաւոր բանակցութիւնների մէջ աշխատել է համոզել լորդ ԲիկոնսՓիլդին թէ լաւ չկ լինի մերժել Ֆրանսիայի առաջարկութիւնը քանի որ նա մինչև այժմ մեծ համակրութիւն է ցոյց տվել անդլիսական դատին։ Վերջապէս լորդ ԲիկոնսՓիլդի հաւանութեամբ

վճռվել է յուլիսի 5-ի նստում, որ պետութիւնները միջնորդեն Բ. Դրան որպէս զի ուղղակի բանակցելով Յունաստանի հետ, մի քիչ տեղ տայ նրան սահմանակից յունական նահանգներից։ Այդ տեղը, կը լինի, կօնդրէսի միջնորդական առաջարկութեան համեմատ, գրեթէ մինչև Սալամիրեայի և Կալամայի ձորերը, Լարիսասայի և Եանեայի վրա։ Եպիրոս և Թեսալիա կը մնան թիւրքաց իշխանութեան ներքե, ստանալով վերանորոգութիւններ Սանտականոյի գաշնագրի 15 դ. յօդուածի համեմատ, այն էլ 1868 թւին Կրիտ կը զ-

զում հաստավված վարչական կազմակերպութեան նման մի բան կը լինի։
Բայց մի՞թէ կարելի է որ Յունաստանը բաւականանայ այդպիսի որոշումներով և յիսունարուց ի վեր իր ունեցած ցանկութիւն-

Ները և երազները զոհէ Բիկօնաֆիլդի քաղաքականութեան, որ ջերմ պաշապան է հաղթիսանում՝ Թիւրքիային։ Յիսուն տարի է, որ կրիտայիներ մի քանի անգամ զէնքը ձեռքին ապստամբվեցան Յունաստանի հետ միանալու համար և մեծ զոհեր անելուց յետոյ ստիպմեան էին թիւրքան տուժի տակ մնալ։ Այս

սըս ալը թրւքաց լուծը առաջ առաջ այս
սօր ևս գեռ ապստամբութիւնը շարունակ-
վում է Կրիտում և թէպէտ Խպիրոսի և Թե-
ալիսայի յոյները խաբվելով Անգլիայի խոս-
ուումներից, դադարեցրած են իրանց ապս-
տամբական շարժումները, բայց Կրիտացիներ
առլորովին չընդունեցին Անգլիայի միջնորդու-
թիւնը: Ամենայատնի քաղաքագէտներ, որոնց
մէջ և լօրդ Պալմէրսոն, գուշակած են որ
մէթէնքի թագաւորութիւնը հաստատվելուց

յետոյ, Կրիտի յոյները այլ ևս չեն կարող
երկար ժամանակ տանել թիւրքաց լուծը և
մի օր կը միանան իրանց ազատված եղբայր-

ների հետ։ Յունաստանի էական շահերն ել
այդ են պահանջում։ Խնչպէս Վալինգտոն
յիշեցրել է կօնդրէսին, երբ 1830 թւին Յու-
նաստանի գահը առաջարկվեցաւ ԱՅօպօլից
թագաւորին, նա ընդունեց, պատճառելով
թէ Յունաստանի սահմանները լաւ գծված
են, որովհետև Թեսալիան, Եպիրոսը և Կրիտը
միացած են նրա հետ։ Ի նկատի ունելով
այս ամենը, շատ հաւանական է որ Յունաս-
տանը հանդարտ չի մնայ և արդէն Աթէնքի
մամուլը սաստիկ գրգռվել է Անգլիայի նեն-
դաւոր քաղաքականութեան դէմ։ Դժուար
թէ կրիտայիններն ել համոզվեն զինաթափ
իննել Անգլիայի միջնորդութեամբ, մինչև որ
ապահովվի իրանց միանալը Յունաստանի
հետ։ 1868-ի կանօնադրութիւնը չէ կարող
բաւականացնել Կրիտի յոյներին, որովհետև
կառավարական ասպարէզը թողած է աւելի
մահմետականներին քան թէ յոյներին, որոնք
թւով աւելի շատ են։ Կրիտի ժողովուրդը այ-
սօր աւելի մեծ իրաւունքով կարող է պա-
հանջել Յունաստանի հետ միացումը քան թէ
ուրիշ անդամներ, որովհետև մահմետական-
ները այդաեղի ժողովրդի քառորդ կամ հին-
գերորդ մասն են կազմում այժմ, այն ինչ
1850 թւին, ժողովրդի կեսը մահմետական-
ները քրիստոնեայ եր։

ԱՆԳԼՈ-ԹԻՒՐԲԱՑ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Անգլիական կառավարութիւնը հաղորդելէ
պարլամենտին չետեւ եալ դօկումէնտները,
յունիսի 4-ին Անգլիայի և Թիւրքիայի մէջ
կամած ռաշինութեան մեռարկութեամբ:

«Մարկիզ Սալբեզիւրի պ. Կայարդին»: 1878
մայիսի 30-ին: Պարոն, մի քանի ժամանակից
և վեր անգլիական և ռուսաց կառավարու-
թիւնների մէջ եղած գաղտնի բանակցու-
թիւններից երեսում է որ Սան-Ստէֆանօի
բաշնագրի եւրօպական Թիւրքիայի վերաբե-
ռեալ յօդուածները բաւականին կը փոխվեն,
այնպէս որ կը համաձայնվեն եւրօպական այլ
գետութիւնների և մասնաւորապէս Անգլիայի
աշների հետ: Այնու ամենայնիւ, այդ յշար
ունենք բաշնագրի ասիական Թիւրքիայի վե-
րաբերեալ մասի վրա: Բաւական յայտնի է
որ ռուսաց կառավարութիւնը չի յօժարվե
հրաժարվել Արաքսի հիւսիսակողմը գտնե-
լած ամրոցների և Բաթումի վերաբերու-
թեամբ դրած պայմաններից, որոնց Բ. Դուռը
հաւանած է, ստիպվելով պատերազմի հետե-
անքը եղող գէպքերից: Հետեւապէս, եթէ
այդ բաշները ըստ ջնջվեն կամ չէզոք դրու-
թեան մէջ ըստ դրվեն, անգլիական կառավար-
ութիւնը իրան պարտաւորութիւն է համա-
ռում բարեփոխել այդ բաշներից ծագելու
հետեւանքները օսմանեան կայսրութեան ա-
սիական նահանգների ապագայի և Անգլիայի
աշների համար, որոնք պինդ կապված են
այդ նահանգների զրութեան հետ:

«Նորին Մեծութեան կառավարութիւնը չէ
պարող անտարբերութեամբ նայել նոր փոփո-
սութիւնների պատահելու վրա։ Ասիական
Թիւրքիան պարունակումէ իր մէջ զանազան
եղերից ծագած և զանազան կրօններին
պատկանող ժողովուրիներ որոնք ընդունակու-
թիւն չունեն իրանք իրանց կառավարելու և
են ձգառմ ոչ մի կերպով դէպի անկախու-
թիւն, այլ պարտաւոր են սուլթանի կառա-
վարութեան իրանց ունեցած հանգստու-
թեան և քաղաքական բարեկեցութեան հա-
նար։ Բայց օսմաննեան ազգատոհմի կառավա-
ռութիւնը մի հին աշխարհակալի կառավա-
ռութիւն է, մի աշխարհակալի որ միշտ օտա-
ռական լինելով, չէ կրթնում ազգակցութեան
համար ունենալու համակրութիւնների վրա,
ոյլ աւելի կրթնում է իր ուժի վրա։ Թիւր-
քաց բանակների յաղթվելը և կառավարու-
թեան յայտնի շփոթութիւնները հաւատաց-

ուում են թէ նա կը նկի և մի քաղաքական փո-
փոխութիւն կը լինի մօտ ժամանակում Արե-
ւելքում ժողովրդի մէջ այդպիսի մի հաւաքք
դոյանալը աւելի վատանգաւոր է կառավարու-
թեան տեղութեան համար քան թէ ան-
աւականութեան զգացմունքը։ Եթէ Սիրիայի,
Փոքր-Ասիայի և Միջագետքի ժողովուրդը
ուննէ որ Բ. Դուռը բացի իր սեփական ու-
ժից ուրիշ ոչինչ երաշխաւորութիւն չունէ իր
դոյութեան համար, նա կը սկսի հաշխներ
անել օսմանեան տիրապետութեան մօտակայ
մնկումի վրա, մանաւանդ մի այդպիսի երաշ-
խաւորութեան տկարութիւնը վերջին դէպ-
քերով հաստատվելուց յետոյ, և իր աչքերը
ըլ դարձնի դէպի նրա յաջորդը։ Եթէ սասոյգ
ինէր անգամ որ Բաթում, Արդահան և Ղարս
են լինի ապագայում կենարօններ ինարիգա-
ների և յարձակվող բանակների գործողու-
թիւնների համար, Ռուսաստանը նրանց իր
հեռագում ունեցած ժամանակ, ահագին փո-
քիր կը փորէ Բ. Դրան ասիական տիրապե-
տութեան ներքեւ։ Ասիական ժողովուրդը
ուննելով մի կողմից պահպանողական տկա-
րութեան և միւս կողմից յարձակողական յա-
ռողութեան նշանները, կը նկատի այդ դրու-
թիւնը իբրև առաջաբան ապագայում լինելու
դէպքերին և թէ երկիւղց և թէ յոյսերից
ըլ զրդվէ անձնանուեր լինել աւելի զօրաւոր
ուկրութեան և թողուլ այն տէրութիւնը որ
պահէս է համարվում թէ գլուխում է դէպի
ործանում։

Անհարելի է որ Նորին Մեծութեան կառա-
լարութիւնը ընդունի այդպիսի զգացումնե-
րից ծագելու հետևանքը այն նահանգնե-
ում որոնց քաղաքական դրութիւնը պինդ
ապագած է Մեծ Քրիտանիայի արևելեան շա-
հերի հետ անկարելի է որ նա ջանքերը չանէ
այդ հետևանքները խափանելու համար։ Նա
հոգագիր չէ իր այդ նպատակին հանել պա-
ռերազմական միջոցների ձեռնարկելով, որ Բ.
Քրան վերադարձնի գրաւված երկիրները Մի
պագիսի ձեռնարկութիւն գժուար կը լինի
թանգ կարծէ. բացի այս, մեծամեծ ա-
չետների պատճառ կը դառնայ և, այնու-
ումնայնիւ, անդիտական կառավարութեան
և նեցած նպատակին կը ծառայէ այն պայ-
նառվ միայն, որ այդ պատերազմից յետոյ
ործադրվեն զգուշութեան միջոցներ, որոնք
արելի է գործադրել առանց նախնական
դատերազմի դժբաղդութիւնները կրելու և
ըրեթէ նոյնչափ ազդու կերպով Ասիական
Երկրիայում օսմանեան տիրապետութեան
ու ողութիւնը ապահովապէս աջողեցնելու
իակ միջոցը, որ այնչափ ազդեցութիւն ու-
նայ այժմ որչափ կունենար եթէ այդ հո-
երը Ռուսաստանին չը տրվելով վերահաս-
տափէր երկրի նախկին դրութիւնը, այս է
որ իր խոստումը կատարելու չափ ոյժ ու-
նեցող մի տէրութիւն յանձնառու լինէր
Էնքի զօրութեամբ մերժել Ռուսաստանի
ողմից այսուհետեւ լինելու որ և իցէ յարձա-
ռում թիւրքաց հողի վրա Ասիայումն Այդ-
իսի մի պայմանագրութիւն, եթէ մէկը¹
անձնառու լինի գործադրել նրա բոլոր ըն-
արձակութեամբ և առանց բացառութիւն-
երի, կարգելէ այն դէպքի պատահելը որ
դատճառ եղած է այդ պայմանագրութեանը,
կը վստահացնէ ասիական նահանգների
ողովքներին, ինչպէս որ հարկաւոր է նրանց
ամար, թէ թիւրքաց կառավարութիւնը
սիայում սահմանված չէ կործանվելու մօտ-
ամանակումն Այնու ամենայնիւ, երկու
պայմանն կայ որոնց պէտք է որ Թիւրքիան
առարգիք որպէս զի Անգլիան յանձնառու
նի վերջիշեալ պարտաւորութիւնը նորին
եծութեան կառավարութիւնը Կ. Պոլսի կօն-
սելէնցիայի առիթով յայտնեց Բ. Դրան
թէ ինքն չի յօժարի վաւերացնել վատ կա-
պարութեան և հարստահարութեան միջո-
վ եղած որոշումներ և հարկաւոր է որ

Անգլիան դեռ ևս ոչ մի պարտաւորութիւն իր վրա չառած Բ. Դրան ասիստական երկիրները մի քանի դէպքերում պաշտպանելու համար, Բ. Դուռը որոշ կերպով ապահովացնել նրան թէ ինքը մտագիր է հարկաւոր բարեկարգութիւններ (րէֆօրմ) մտցնել քրիստոնեաների և Բ. Դրան այլ հպատակների կառավարութեան մէջ այդ նահանգներում Ընդհանուր հանգամանքների վրա խօսված ժամանակ, շատ պարտաւորութիւններ չեն պա-

թիւններ (որոնք յետոյ կորոշվեն երկու տէ-
րութիւնների համաձայնութեամբ) մոցնել
քրիստոնեաների և Բ. Պրան այլ հպատակ-
ների կառավարութեան մէջ այդ երկիրնե-
րում և որպէս զի Անգլիան կարողանայ հար-
կաւոր եղած միջոցներին ձեռնարկել իր խոս-
տումը գործադրելու համար, սուլթանը կը
հաւանի նաև տալ Կիպրոս կղզին որ Անգ-
լիան գրաւի և կառավարի նրան։ ՍԱԼԻՍ-
ՔԻԹԻԹԻ։⁹

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 29 յունիս 78

Այստեղ ամեն
տամաշ և անորոշ
յառաջ ուղարիս, մը
կը հասնին մեզ:
վեցաւ որ ուշ ժա
պատրիարքարան,
Ամեն հայու դէմք
խութիւն կերևէր
կազմած նոյն զիշ
Պօլիսէն երթան
կագիծներ կը պա

յանք որ ծածկագիր
սխալ գրված լինեց
դալ. մի ուրիշ հա-
մացած էր. այլ
անձերի վրա երևա-
պատրութիւն կա-
ժամ յետոյ յուզու-
Պօլսի հայոց մէջ:
սած են. աւագաժ
աւարտած և նիստ
խնդիր. այս խօս-
բերնէ: Գործ, աշ-
ղած, շատեր կը ս-
անձինք տեսնել.
կը սպասէ. ձախոր-
պատրիարքը անմ-
սպասէ ռուսակա-
վոսփորէն: Այդ
կարողացեր են կ-
գերմանիայի կայ-
պատգամաւորներու-
նի ժամ յառաջ
պիտի անէր, այժ-
ամեն մարդ: Ինչ
կերածն. աւագած
քը աւելի սաստ-
քեար»-ի երեկոյեն
ժողովուրդը ինչ ո-
ված տեսաւ. եւրո-
թեան առեր է հա-
քաց պատգամաւ-
որ Բ. Դուռը ընդ-
տի անէ, հայերն ո-
թեանց և հարկ չը-
նավարութիւն տա-
այս բացատրութիւ-
ներ կայծակի արա-
Պօլսի մէջ: Զէինք
Եւրոպիոյ տուած
Ֆրանսիայի առաջ-
ւոր համակրութիւն
խոստադել էր պա-

արաւ աւագաժողո
բեկարգութիւններ
կը ծիծաղի նորա
խնդիրը Հայաստա
տայ նորա խոստո
Երէկ լուր տարա
քեարի» հրատարս
մայք ապահես կո

«Հավասի» հեռութեան աւագաժողով կէսօրին լուր հասաներկայացունէ մի Այս խաճնաշչիոթ մէջ թողած են: Ից ցած մի բարի լուր հազորդել ամեն:

Մի շաբաթ յառ
բագոյն հրաման եկա

Ե որ Բերլինի հայ պատգամաւորներն շուտով վերադառնան կ. Պօլիս և թէ պէտք է որ պատրիարքն անմիջապէս հեռագրէ Բերլին։ Պատրիարքը սրբազնն կը պատասխանէ թէ՝ «Այդ պատգամաւորներ ազգը զրկեց և միայն ազգային երեսփոխանական ժողովը կարող է հրամայել նոցա վերադարձը. եթէ նոքա վերադառնան, հարկաւոր կը լինի որ ես երթամ» Այս պատասխանէն յետոյ Բ. Գուրը լոեց։ Կառավարութիւնը շատ տհաճութեամբ կը նայի այժմ հասոռ մոաւ Առամբանը եռա եկմանաւ. թէ հա-

— Այս բարելից լրագրուստներն աղօրդում են, որ
այնտեղ սպասում են մինչխար Ծիստիչի վերա-
դարձին:

չուզեր հաւատալ անգամ. պաշտօնեայները կասեն որ եթէ հայոց պահանջներն ալ չնորհուին, թիւրքաց ուրիշ բան չը մնար անել, բայց եթէ քաշուել երթալ Մէկկէ և Մէդլինէ. Վերջապէս դժուարութիւններ ամեն կողմէ պաշարած են զմեզ. Նենգաւոր Անգլիան մի կողմէն, բարբարս թիւրքը միւս կողմէն. բայց յուսահատուած չենք: Խրաքանչիւր ռոպէ իրբ դար կերեի մեզ. անհամբեր կր սպասենք որոյ լուրերու:

Այս բոպէին (հինգչարթի կէսօր) որ նամակս կը փակեմ և թղթատարն կը մեկնի, այնպի-սի լուրեր ստացանք, որ չէ կարելի չաւե-լացնել այստեղ երկու տող: Հայոց խնդիրն, ի մեծ դժբաղդութիւն մեղ, անյաջող կերպով վճռուած է: Յունաց դատն ալ անյաջող է: սաս-տիկ գրգռված են: Մեր անյաջողութեան պատ-ճառը սա է որ Անգլիա պաշտպանողական և թեամբ: «Արենելեան հարցը պէտք է Եւրօպան վճռէր, ասաց նա, դրա համար հաւաքվեցաւ Բեր-լինի կօնզրէսը, որ կարող էր աւելի եռանդով գործել: Ոչ ոք չէ կարող մերժել, որ կօնզրէսը մեծ աջողութիւն ունեցաւ: Ռուսաստանը հրա-ժարվեցաւ Սան-Ստէֆանօի դաշնագրի մի քանի կէտերից և այդպիսով Եւրօպայի խաղաղութիւնը աւելի հաստատվեցաւ: Տիսսալի ասս ճառո

յարձակողական գաղտնի դաշնադրութիւն արերէ Բ. Դրան հետ, փոխարէն ստանալով կիպրոս կղզին, Սուէզի ջրանցին, այն է Հնդկաստանի ճանապարհին մօտ Ալյո լուրը որ մինչև անգամ Եւրօպան զարմացուց, մեզ ապշեցուց։ Զէինք յուսար որ Ալբիօնի զաւակները այս աստիճան փցուն ոգոյ տէր լինէին։ Բայց արդարութիւնը կը կատարուի գաղ կամ ուշ. բաւական է որ մենք աշխատենք. ապագան մերն է...»

մեծ ոգեսրութեամբ ընդունվեց։

— Լօնդօնից հեռագրում են յուլիսի 12-ին որ Ստաֆֆօրդ Նօրթկոտ պատասխանելով Զարլ Դիլկի, յայտնում է թէ շատ հաւանական է որ կառավարութիւնը մի կրէզիտ կը խնդրի մօտ ժամանակներում, Թիւրքիայի հետ կապված դաշնադրութեան վերաբերութեամբ։

— «Agence Russe» լրագիրը յայտնում է որ Ռուսաստանի և Թիւրքիայի անդամներից կազմ-

ված մի մասնաժողով գնում է կ. Պօլսից Վար-
նա և Շումկա, այդ բերդերը մաքրելու համար։
—Բերլինից յուշիսի 10-ին հազարդում են «In-
dépendance Belge» Մագրին հետևեալը՝ «կօնդ-

— «Daily News» լրագրի Բերլինի թղթակիցը հայոց խնդրի առիթով հազորդում է հետևեալը. «Անգլիացիները, ինչպէս լսվում է, մտադրիւմ են իրանց հովանաւորութեան տակ վերցնել Հայաստանը, ինչպէս որ Ֆրանսիան վերցրեց Լիվանը իր հովանաւորութեան ներքոյ։ Հայաստանին կը տրփի քրիստոնեայ նահանգապետ և քրիստոնէական կառավարութիւն, և բացի գրանից միջոցներ գործ կը դրվեն քուրդերին սահմանարելու համար։ Այս նախագծում մտնում են Ոստանուական և եռնացաթան առատանոուական

սահմանակից գիծ ընդունելը, Վանը և Բայազէթի Թիւրքիային թողնելը, Բաթումը ազատ նաւահանգիստ ճանաչելը և Ղարսը տալ Օռուսաստանին: Հայ քրիստոնեաներին պաշտպանելու համար կը հիմնվի քրիստոնէական հեծելացունդ, որի մէջ ի հարկէ և մահմետականները կընդունվեն: Այդպէսով Հայաստանը խոկապէս մի և նոյն դրութիւնը կրւնենայ, ինչ որ Հայդերաբագը Հնդկաստանում, այն զանազանութեամբ միայն, որ Հայաստանի նահանգապետին կը նշանակէ Բ. Դուռը, բայց այս պաշտօնը ժառանգաբար չի լինի և բերդապահ գունդերը թիւրքաց զօրքերից կը կազմվեն և ոչ թէ անդիսական զօրքերից:»

— Բերլինից հեռագրում են, որ «Nord. Allg. Ztg.» լրագիրը քննադատելով Բիսմարկի կօնզ-րէսում խօսած վերջին ճառը, գովում է կոմս Շուվալօվի, Վագինզտօնի և Կօրտիի ծառայութիւնները ընդհանուր համաձայնութեանը հաս-նելու համար։ Մահմէդ Ալի-փաշան չուտով կու-ղերովի կ. Պօլիս

— Հօնդօնից լրագիրներին հեռագրում են, որ լորդերի ժողովում լորդ Ռիչմոնդ ասաց, որ յուլիսի 18-ին կառավարութիւնը լորդերի ժողովին մանրամասն հաղորդակցութիւններ կանի Բերլինի դաշնագրի վերաբերութեամբ:

— Լօնդօնից հեռագրում են լրագիրներին, որ
պահպանողական կուսակցութիւնը մեծ պատ-
րաստութիւններ է տեսել լորդ Բիկոնսֆիլդին
հանդիսով ընդունելու համար։ Օգոստոսի 3-ին
նշանակած է մինիստրների բանկէտ, որին կը
մասնակցի լորդ Բիկոնսֆիլդ։

— Կ. Պօլսից միջազգային ընկերութիւնը հեռազրում է, որ յուլիսի 2/14 սուլթանի նախագահութեամբ մեծ խորհուրդ կայացաւ և խորհուրդը քննեց Թեսալիայի և Եպիրոսի հարցերը, Յունաստանի վերաբերութեամբ խորհուրդը վըճապէսս, ոռուսաց 100 ր. Գերմանիայի վըաարժէ 218 մարկ 50 ֆէն., Փարիզի վըա 268 Փրանկ 50 սանտիմ: Տրամադրութիւնը թոյլ է:

ε ι υ ο σ υ ρ ο υ ρ ο υ η ρ θ η ρ η η η η

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՔԵՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆ-
ՔԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են, ՍՊԻՏՈԿ
ՇՈՒՄԱՉԵՑ զինուորականների շորերի համար
արշինը 1 ր., և բարձր ՈՒԽՆՍԻ չորերի հա-
մար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ
արափոխիկ հրանդութիւնների դէմ և ԽԻՆԱՅԻ
ԱԼՀԱՄՄԵՆ (իւղ) $1\frac{1}{4}$ ր., ՍԱՊՈՆ 10 կ. և
արձր. ՅԻԾՐԱՒ մագնեցի $1\frac{1}{2}$ ր., ԲԻՍԿՎԻՏ-
ԵՐ 1 ր., և բարձր. ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., եր-
աթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղցներ
50 կ. և բարձր, ծանապարհի ԱՐԱՆԵՐ դիւժինը
3 ր., ԳՐԻՉՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ԲԵՎՈԼ-
ԿԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոտէկ
սրական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԴԱԿԱՆ-
ԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակենտօչներ,
ըրեխանների շորեր 4 ր. և բարձր, հիմնալի վե-
արկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿ-
ՐԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօդնօսներ 10 կ.
և բարձր, րօմ, կոնեակ, պօրտ-վէյն, խերես և
անգլիական օգի $1\frac{1}{2}$ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ.
և առաջ շատակ և անիսամար թէւ 1 ր., ֆակտո-

14-20

20-20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՒՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է քաղաքի բնակիչներին, որ գնա-
հառական հարկի 1875 թ. երկրորդ կեսի
գակասորդների հաւաքելը Դումայի վճռի հա-
մեմատ յանձնած է նահանգական քարտու-
լար Ալբ.քսանովը Միլսայօվից Զաբարօվին:
Քաղաքային վարչութիւնը հրաւիրում է կա-
ռուածատէրներին, որոնք պէտք է վճարեն
գակասորդներ, յանձնեն փողը Զաբարօվին
և նրանից ուղած ապահովագիրներ ստանան:
Հակառակ դէպ.քում պ. Զաբարօվին իրաւունք
է տուած անկանօն հարկատուների հետ վար-
կել քաղաքային կանոնադր. 131 յօդ. հա-
մեմատ: Թիֆլիսի դլաւոր պ. Պօլիցմէյտե-
րին յայտնած է, որ նա գործակցէ պ. Զա-
բարօվին հարկատու դէպ.քում Այն կա-
ռուածների ցուցակը, որոնք պէտք է պահա-

3-3

2-3

Ները վարչութեան անդամի ստորագրութեամբ
յանձնված են պ. Զաբարօվինս Պ. Զաբարօվ
փողեր կրնդունի իր գրասենեակում, որ գր-
տնվում է քաղաքային վարչութեան տան
մշջ առաւտեան 9—12 ժամը: Պ. Զաբա-
րօվի բացակայութեան ժամանակ փողը կա-
րելի է մոցնել վարչութեան գանձարանը:

3-3

2-3

ՅՈՒՂԵՍԻ 13.

S b q, b q u s n s

ԹԻՖԼԻՏՈՒ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	Բ.	Կ.	ՀԵՇԱԳԻՐ	Բ.	Կ.	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ	ՓՈՍ	ԲԺՇԿԱՆՈՑ
(Յուլիսի 12-ին)								
Առկին (պօլումբերիալը)	8	5	Կովկասի և Ան- դրկովկասի քա- ղաքները . . .	1500	-	Թիֆլիսի մինչև Փոթի (Տանապահանորդների գնացքը) 9 ժամին 21 ժամէ առաւտեան: Մինչև Միխայլօվօ (Խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:	Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ լազիրներ և ժամանակաշատ ամեն տեղ ուղարկեռ, ընդունվում են ամեն օր, առաւտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Երկուշաբթի կամաց 3 ժամից մինչև 7: Խոկ կիրակի օրերը հասա- րակ նամակներ մինչև 10 ժամ առաւտեան և 3-7 երեկոյեան:	Հիւանդների լնդունելու- թիւնը առաւտօտ 9 ժամից թէ ծանր փօստ ամեն տեղ մինչև 1 կէսօրից յետոյ:
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	-	Ոռուսատան	1300	-	Դամին 21 ժամէ առաւտեան: Մինչև Միխայլօվօ (Խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:	Երկուշաբթի վէրմի- շէվ և գորալիլիչ ներքին հիւանդութիւններ, գուշա- րեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:	
Հին 20 կ. 72 պր. 1000 մ.	1300	-	Աւատրիա . . .	233	-	Առաջին . . .	235	-
Վիդրիչնի 50% առաջի փո- խառութեան տոմ. 100 մ.	233	-	Անդրիա . . .	235	-	Անդրիա . . .	100	-
Երկրորդ 5% վիդրիչնի մ.	235	-	Գերմանիա . . .	100	-	Գերմանիա . . .	100	-
Մարսել կուրու 237—	100	-	Ֆրանսիա . . .	75	-	Ֆրանսիա . . .	75	-
Լոնդոնի կուրու 0դեսայի փրա	10	67						
Վենայի կուրու ամէ 112 դ.	121	-						
Դաւրեմի բարաթը	5	90	ԱՆԴՐԿՈՎԱՍԵԱՆ ՄԱՆ- ԿՈՒՄԱԳԱԿԱՆ ԳՈՐԾ	300		Թիֆլիսից . . .	9. 21	5. 18
Առետրական բանկի ակ- ցիան 200 մ. . . .	300		(Վերայի փրա № 38)			Գօրի . . .	11. 58	9. 43
Փօթի թիֆլուսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	125	-				Միխայլօվօ . . .	1. 29	11. 57
Շաքարը քրօցկու . . .	7	80	Ծննդկանների ընդու- նելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամա- նակ, օրը 50 կոպէկ վար- ձով իսկ չքաւորներին ան- վարձ. Առանձին սենետակ- ներում ամիսը 30-50	7	70	Բիոն . . .	6. 47	
" միւս տեսակը . . .	6	20				Փօթի . . .	9. 40	
" շաքարաւաղը . . .	6	50						
" տրանզիտը . . .	6	50						
" մաքու վճարած	12	-						
Բամբակը ներեանու Ա- մերիկայի սերմից	8	50	Փօթի ի ի ց . . .					
Միւս տեսակը հին սերմից.	7	50	Բիոն . . .					
Բուրդ թուշի	8	-	Միխայլօվօ . . .					
" թարաքամի . . .	4	20	Գօրի . . .					
Ալիւր Շորագալու . . .	1	40	Թիֆլիս գալիսէ առաջին գը- նդհանուր սենետակում 18					
" ներանի	-	-	րուբլ. իսկ մասնաւոր սե- նետակներում 30 րուբլ ամ-					
Գարին	1	20	սական:					
Մոմը բնաճարպի (ստեար.)	13	20	Երթեւ և հիւանդ կա- նաց և երեխաների ըն- դունելութիւնը ամեն օր,					
Մետաքս նուխավայ . . .	180	-	բացի կիրակի օրերից, 9 ^½ մինչև 11 ժամ առաւո- տեան. Բժշկապետ Ա. ա- նօվ:					
Կոկոնը նուխավայ (բուժ.)	100	-						
Ֆրիզնը (լասը) Ագու- լեաց	45	-						
Կոփէնը նուխավայ (բուժ.)	55	-						
Կոփէն մօկոի	27	-						
" լիվանի	22	-						
" մարտինեսինո	20	-						